


22400





406

200

ԺՈՂՈՎՐԴԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

A. Bedrov
1899


ԳԱՄԱՓ-ՔԱՐԻՊԱ

ԳՐԵՑ

ԲԱ.ԲԱ-ԳԱ.ՍՊԱՐ

ՌՈՒՍՉՈՒՔ

1899



Տպարան «Նաևհետ»

391.39-092
Դ-29

ԺՈՂՈՎՐԴԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԵ

ԳԱՄԱՆ-ՔԱԹԻՊԱ

ԳՐԵՑ

ԲԱԲԱ-ԳԱՍՊԱՐ

ՌՈՒՍՈՒՆԻՔ

1899

2003

Syuzarii «Եաշիճսա»

34940-ԱՅ

Յ Ա. Ռ Ա. Զ Ա. Բ Ա. Ն Ի Տ Ե Ղ.

Այս փոքրիկ յօդածը գրւած է 1892 թին, Գամառ-Քարիպայի մահից մի փոքր ժամանակ յետոյ: Զանազան պատճառներ մեզ բոլլ չտին սպազրել իր ժամանակին: Այժմ յարմարութիւն գտնելով՝ մենք նրան շոյս ենի ընծայում:

Հարկաւոր ենի համարում աւելացնել, որ սկզբնական ձեւը վերջերս ենթարկեցինք մի ժամի մասնաւոր փոքրիկ փոփոխութիւնների եւ աւելացրինք մի երկու պարզող փասեր:

1899 ՄԱՅԻՍ 1

Բ.Ա.ԲԱ.ԴԱ.Ա.ՊԱՐ

Ա.Ա.ԽՈՎՈՒՔ



Կարդալ, գրել լաւ բան է...
Բայց որ հասար ֆնտորինէ,
Աշակերտին հարցուցիք-
Վորել զիսէ՞ նա արին:

Գ.Ա.Մ.Ա.Ո. Ք.Ա.Թ.Ի.Պ.Ա.

Որքան աւելի են բանասեղծին նման մարդիկը,
այնին աւելի մեծ է նրա հոչակը:

ԿՄԻԼ ՀԵՆՆԵԿԵՆ

I

Ով կը կարգայ եւ կողեւորւի բանաստեղծի գրւածք-
ներով նրա համար, որ այն տեղ գտնում է իր երկա՞ր՝
ժամանակ փայփայած ու գուրգուրած գաղափարները՝
նա սերտ հոգեկից է զրոյին. նրա հոգին անպատճառ
արձագանք կրասյ, կը համակրէ բանաստեղծին, եթէ նոյն
իսկ այդ համակրութիւնը լինի հակառակ իր առօրեայ
կենսական շահերին:
Նոյնը կարելի է առել եւ նկարչի, երգողի, քանդա-
կազործի ու նւազողի վերաբերմամբ:

18177-39

Այդպիսի ընթերցողի, լսողի կամ դիտողի եւ հեղինակի մէջ կայ զգացմունքների ու ձգտումների նմանութիւն կամ հոգեկցութիւն:

Հոգեկցութիւնը է զօրեղ եւ թոյլ: Երբ ընթերցողի զգացմունքներն ունին որոշ պարզութիւն և սեփական գոյութեան գիտակցութիւն՝ հոգեկցութիւնը զօրեղ է: Այդպէս է այսօր գերմանական բանուորների գրութիւնը իրենց առաջնորդների ու քարոզիչների վերաբերութեամբ: Մի Բէրէլի, մի Լիբկնէխտի եւ մի սեփականազուրկ բանուորի համոզմունքների ու ձըդտումների մէջ կայ մի ահագին նմանութիւն, մի նոյնութիւն: Այդպէս է այսօրւան մեր յեղափոխականն ըուր գործիչների եւ թափքու ու Գանառ-Քաթիլայի վերաբերութեամբ: Նրանց զգացմունքները ներդաշնակ են, իրար արձականգ են տալիս. նրանց ձգտումները նոյնն են գլխաւոր կէտերում:

Իսկ երբ բանաստեղծը, կարծէս, նոր է ճնեցնում, նոր է որոշ կարգի ու պարզութեան հասցնում ընթերցողի մութ, խարխափող զգացմունքները, նոր է զրդում մտածելու դրանց մասին՝ հոգեկցութիւնը լինում է սկզբներում շատ թոյլ եւ միայն վերջը, որոշ ժամանակ անցնելուց եւ երկար աշխատութիւն թափւելուց յետոյ նա գառնում է զօրեղ, հասնում հարկաւոր կատարելութեան:

Յանաստեղծի դերն առաջին դէմքում այնքան էլ մեծ չէ. նա լինում է լոկ արտայայտիչ որոշ, պարզ ու արդգէն զարգացած զգացմունքների ու ձգտումների: Իսկ երկրորդ դէմքում նրա գերը շատ մեծ ու արդիւնաւոր է. նա զանում է սկսող մի շարք նոր զգացմունքների, մաքերի ու ձգտումների, որոնք աննշմարելի էին մինչ այդ. կարձնանա զանում է հայր մի նոր ուղղութեան կամ դպրոցի:

Եթէ գեղարւեստագէտն այն հաղագիւտ հանձարներիցն է, որոնց համար ընդունւած է տաել՝ «Նա ժամանակից առաջ է ծնւել»-ի հարկէ նա չի կարող հասարակութեան մէջ իրեն արձագանդ տւողներ, հոգեկից եղբայրներ ունենալ: Նա կը մնայ մենակ, մինչեւ կը հասնի ժամանակը, մինչեւ հասարակական կեանքի գանդազ զարգացումը թոյլ կըտայ մարգկանց ընթունելու նրա քարոզաները, զգալու եւ վառելու նրա զգացմունքներով: Ցիշեցէ՛ք Շէքսպիրին, ո՛րքան ժամանակ դրին նրան խելազարի տեղ, չուղեցին ճանաչել նրա մէջ նոյն իսկ որ եւ է բանաստեղծական տաղանդ. . . : Ցիշեցէ՛ք Թովմաս Մօրտուին, Կամպանելլային, Թօրերտ Օվենին, Սէն-Սիմօնին, Ֆուրլէին. . . :

* * *

Իսկ ո՞լուեղից են ծնւում իրենք—բանաստեղծները,

մեծ քարոզիչները, գրողները . . . հանձարները: Ի՞նչո՞ւ նրանք ամէն օր չկան, ամէն տեղ չեն վկառում, եւ կամ ինչո՞ւ ներկայի հանձարների նման մտածող, նրանց նման ձգտումներ ունեցող չին ճնշում մի քանի դար առաջ:

Մենք կանգ կառնենք որ եւ է ուզութեան կամ «զպրոցի» հայր հանդիսացող տաղանդի կամ հանձարի առաջանալու պայմանների վրայ, հաստատ համոզւած լինելով, որ երկրորդական հետեւողների ծնուելն արդէն խսկ պարզւած կը լինի:

Ամէն մի երեւոյթ ունի իր պատճառը: Առաջանում է մի մեծ բանաստեղծ, մի որոշ ուզութեան հեղինակ՝ նա եւ նրա ուզութիւնը եւս ունին իրենց բաւարար պատճառները: Ի՞նչո՞ւ, օրինակ, Բաֆֆին ու Գամառ-Քաթի տան, մեր գրականութեան այդ երկու հսկաները չերգեցին ոչ մի ուրիշ բան, բացի «հայի արցունքը», «վանեցու հեկեկանքը», զէնքի ու արեան անհրաժեշտութիւնը . . . : Ի՞նչո՞ւ այսօր Եւրոպական բուրժուական գրականութիւնը մօտենում է ոնանկութեան, ուժասպառ է լինում, եւ գրական ասպարեզի վրայ երեւացող տաղանդասոր բոլոր գրութիւնների նիւթը գլխաւորապէս կեղեւած բանտրն ու կեղեքող գրամառէրերն են: Ի՞նչո՞ւ Եւրոպայում ամբոխը հերոսացնում է այսօր միայն սոցիալիստ գրողներին, իսկ մեղանում՝ զէնք, քաջու-

թիւն, ապատամբութիւն ու ազատութիւն քարոզողներին Սրանք երեւոյթներ են, որ իրենց պատճառներն ունին. եւ այդ բոլորի պատճառները մենք կարող ենք ամփոփել մի ընդհանուր բառի մէջ՝ ժամանակի պահանջ:

Այսօր Եւրոպայի համար ժամանակի պահանջը կամ օրւայ հարցը սօցիալիզմն է, մասնաւոր սեփականութեան ոչնչացումը, համայնական սեփականութեան իրականացումը: Այդ է հերթական հարցը, այդ ուզութեամբ էլ գործում են բոլոր նորածին թարմ տաղանդներն ու հանձարները եւ միմիայն այդ ճանապարհով մարդիկ կարող են այսօր հասնել հերոսութեան, քաշել իրենց ետեւից ամբոխին: Մեղանում այսօրւայ հարցն է հեծելը տաճանքից խեղգուող տաճկահայի ազատութիւնը. եւ միայն ու միայն այդ ասպարեզի վրայ այսօր մեղանում կարելի է հերոսանալ, պաշտել ժողովրդից, գրաւել նրա չողին:

Ընդհանրապէս հասարակութիւնների կեանքի մէջ կան շրջաններ, երբ ամբողջութիւնը բռնկւած է լինում մի որոշ հոսանքով, վարակւած մի ընդհանուր ձգտումով: Այսպէս՝ հայերիս համար կուսաւորչի ժամանակ տիրում էր կրօնական մի զօրեղ ձգտում, որի ազգեցութեան առակ միլիոնաւոր ամբոխը ջուրն էր մտնում, ծունկ էր չոքում իր կուսաւորչի առաջ, հաւատալով, որ «գրկելու

է նոգով»։ Կրօնական այս ծայրայեղ զգացմունքի առաջը ոչինչ չի կարող առնել, ոչի՞նչ—նոյն իսկ ներոնի «մարդկալին կերպնները», Հռոմի կրկէսն իր քաղցած առիւծներով ու վագբերով, Նոյն իսկ նաբուգոզոնոսորի լափող խարոյկը։ Այսպէս՝ մեր Ե դարի գիրն ու դպրութիւնը, ուսման ծարաւը եւս ժամանակի հոսանքներ, կեանքի պահանջներ էին։ Նոյն տեսակ պահանջներ էին եւ բողոքականութեան երեւալը, Թրանսիական Մեծ-Յեղափոխութիւնը, 60-ական թւականների ոռւսական ճորտերի ազատումը . . . բոլորն էլ ժամանակի պահանջներ էին, որ անպատճ'ո պէտք է կատարէին եւ իրենց ծնեցնող հայր-հերոսներն ունենային։

* * *

Բայց ո՞րտեղից է առաջանում այդ ժամանակի պահանջը. ի՞նչն է նրա՛ պատճառը։

Այս հարցը բաւարար կերպով քննելու համար՝ պէտք են հատորներ. . . պէտք է վերածել ամբողջ «պատճառականութեան փիլիսոփայութիւն» կոչւած գիտութիւնը։ Իսկ մեր նպատակն այդ չէ. դրա համար էլ մենք կաշխատինք կարձ կարել. միայն այնքան, որ մեր ապագայ վերլուծութիւնը հարկաւոր եղածին չափ պարզի։

Նորագոյն հասարակական գիտութիւնները մեզ ցոյց են տալիս, որ հասարակական կեանքի բոլոր փոփոխու-

թիւնների հիմքը խոր կերպով թաղւած է անտեսական երեւոյթների մէջ։ Ամէն հասարակութեան իրաւագիտական, բարոյական, կրօնական եւ այլ հիմնարկութիւնների կազմը, գոնէ խոշոր գծերով, չափում եւ ձեւում է նոյն հասարակութեան տնտեսական կազմի համեմատ։ Փոփոխում է տնտեսական կազմը, անպայման կերպով փոփոխում են եւ միւս հիմնարկութիւնները, ե՛ւ տովորութիւններն ու բարոյականութիւնը եւ այլն։ Դրա հակառակ՝ չեն կարող փոխել միւս հիմնարկութիւնները քիչ ու շատ չօշափելի չափերով՝ մինչեւ չփոխեին արնեսական հիմքերը։

Տնտեսական կազմ կամ հիմքեր առելով՝ պէտք է հասկանալ հողատիրութիւնը, սեփականութեան բոլոր ձեւերը եւ այլն։

Իսկ այս վերջինների ձեւը կախւած է արդիւնագործութեան գործիքների ձեւից, նրանց զարգացումից։ Եթէ գործիքները հնարաւոր են գարձնում մասնաւոր սեփականութեան կամ մանր հողատիրութիւն, իշխում է սեփականութեան ա՛յդ ձեւը։ Իսկ եթէ արդիւնագործութեան գործիքների կամ միջոցների բնաւորութիւնն այնպէս է, որ պահանջում է խմբական կամ համայնական տիրապետութիւն, հասարակութեան մէջ իշխում է համայնական սեփականութեան ձեւը, համայնական հոգատիրութիւնը եւ այլն։

Այսպիսով՝ հասարակական կեանքի բոլոր երեւոյթների վերջնական արմատները պէտք է որոնել արդիւնագործութեան միջոցների կամ գործիքների մէջ։ Ի հարկէ «գործիք» ասելով, չպէտքէ ըմբռնել միայն կացինը կամ դանակը, այլ արդիւնագործելուն նպաստող բոլոր հասարաւոր միջոցները։

Փոփոխուում, շարժւում են արդիւնագործութեան միջոցները, նրանց համապատասխան ձեւով փոփոխուում ու շարժւում են նաև գաղափարները, գրականութիւնը, կրօնը, իրաւագիտութիւնը եւ այլն։ Առաջ վազողը միշտ տնտեսականն է։

Երբ արդիւնագործութեան միջոցների, ուրեմն եւ անտեսական ձեւերի՝ մէջ առաջանուում է արդէն մի նշմարելի խոշոր փոփոխութիւն, մարդկային հանճարն իսկոյն ըմբռնուում է այդ փոփոխութիւնը եւ իր սեփական ուժով կազմուում, շինուած է իր գլխուում հասարակական կեանքի բոլոր հիմնարկութիւնների այն ձեւերը, որոնք պէտք է համապատասխանեն անտեսական փոփոխուած այդ հիմքերին։ Մրանից էլ շատերը կարծուում են, որ գաղափարն է առաջ վազողը եւ կեանքը նրա յետեւից գնացողը։ Բայց մի փոքրի՛կ փիլիսոփայական հարցուում բաւական է ջրելու այդ կարծիքը։ Ո՞րտեղից ձնւեց «գաղափարը», ի՞նչ իրական հիմքեր ունի նա

կեանքի մէջ։ Զէ՞ որ ոչնչից մի ինչ ձնւել չի կարող եւ ոչի՞նչ չի կարող էապէս ոչնչանալ։ Ի հարկէ նոյն հարցը մենք կարող ենք գնել նաև արդիւնագործութեան գործիքների վերաբերութեամբ։ Ո՞րտեղից ձնան նրանք, ի՞նչ հիմքեր ունին կեանքի մէջ։ Պատասխանը պարզ է. ապրելու եւ լաւ ապրելու կարիքից, զոյտութեան անողորմ կուից . . . : Միայն այս հարցերն արդէն մեղ հանուում են մարդկային ընկերութեան կամ հասարակութեան կեանքից եւ չօշափում թեան կամ հասարակութիւնը. Մարդկային հասաւութանուուր կենդանաբանութիւնը. Իսրայէլի կեանքնել մինչեւ այն կէտը, որտեղ կայ մեծ կամ փոքր մի հասարակութիւն. Իսկ ուր չկայ հասարակութիւն, այնտեղ արդէն չկայ եւ հասարակական հարց։

Այս է պատմութեան իրապաշտական կամ մատերիալիստ փիլիսոփայութիւնը, որ կոչւում է Մարգիկմ։ Նրա մասին երկարօրէն խօսելը մեղ շատ հեռու կը տանի. մենք ընդունուում ենք այդ տեսութիւնն իբր հիմնուին ապացուցւած եւ անցնուում մեր վերլուծութեան։

II

Հասարակական հարցերում հանճարեղ մարդը նա է, որ շուտով եւ ճիշտ կը նշմարէ արդիւնագործութեան

միջոցների մէջ կատարւած փոփոխութիւնները. կը հաս-
կանայ, կը բռնէ տնտեսական այն նոր պահանջները, որ
ապագայ հասարակական կազմի համար հիմքեր են զառ-
նալու: Հանձարը կը բռնէ պարզօրէն այդ փոփոխու-
թիւնները և կը կաղմէ ու կը քարոզէ հասարակական
կեանքի այն հասարաւոր ձեւերը, որ կարող պէտք է
լինին համապատասխանել այդ եղած տնտեսական փո-
փոխութիւններին:

Նոր ուղղութեան կամ նոր գորոցի հայր զառնում
են այն գրողները, որ արձագանք են տալիս հասարա-
կութեան ապագայ կազմին հիմք ծառայելու կոչւած
սկզբունքներին:

Ժամանակի պահանջ ասելով, մենք հասկանում ենք
տնտեսական հիմքերի փոփոխութիւնից առաջացած այդ
նոր կազմի, նոր ուղղութեան կարիքը, որը նոյնքան
անհրաժեշտ ու անխուսափելի է, որքան են բնական
միւս բոլոր օրէնքները:

Չի կարելի անսպատիժ կերպով կանգնել զօրեղ հե-
ղեղի առաջ կամ ձեռքը կոխել կրակի մէջ: Ճիշտ այդ-
պէս էլ չի' կարելի կենսական ճակատագրաբար անհր-
աժեշտ փոփոխութիւնների առաջը կանգնել, նրանց
ընթացքը փոխելու աշխատիլ:

Ով կը դիմագրէ ժամանակի արդ պահանջներին, ով
կաշխատի այդ ձգումների առաջ պատւար կանգնել՝

նա անշուշտ կը ձգմէի պատմական յաղթական շարժման
տակ: Զեզ օրինակ քաղաքական բռնապետութիւնների
քայլայումը Եւրոպայում, պատմական եւ այլ եկեղեցիների
բարոյական անկումը, որ գանգա՛զ կերպով կատարւում
է եւ այսօր... ձեզ օրինակ Զինաստանի գարեւոր ան-
շարժութեան կործանումը, թուրք բանակալութեան
քանզելու գործողութիւնը: Այս անմիտ հիմնարկու-
թիւնները վաղուց արգէն զաղարել են ժամանակի
պահանջ լինելուց, նրանցից շատերն արգէն մեռել են,
իսկ միւսներն էլ լուծւելու, մեռնելու վրայ են:

Ինչ որ տասցինք հիմնարկութիւնների մասին, նոյնը
կարող ենք ասել եւ անհասների մասին:

Այս', այն բոլոր գործողները եւ հիմնարկութիւնն-
երը, որոնք սխալ կը բանեն ժամանակի պահանջը,
նրա ոգին, որոնք կաշխատին գո՞նէ փո՛քը ինչ շեղել
իրերի պատմական շարժումն իր ուղիղ ճանապարհից՝
կը մասն արհամարհւած, անուշագիր լքած: Դրանք
կարող են մինչեւ անդամ աղմուկ բարձրացնել փառքի
սրակների ու լուսապատ գափնիների վրայ ննջել բայց
այդ ամէնը կարծօրեայ կը լինի... նրանք անպատճառ
կը նկնին, կը մերկացցին:

Գրականութիւնն, իբր հասարակական գործունէու-
թեան առաջնակարգ ասպարէզ, ենթարկւում է այն
անխախտ օրէնքներին, որոնք կառավարում են հասա-

րակական միւս ձեւերը: Այստեղ ժամանակի հասցրած հարւածն աւելի զգալի է: Ո՞րքան ներքուստ տանջւում է անկեղծ զբողը, երբ զգում է, որ իր մտքերն այլեւս համակրութիւն չեն վայելում, որովհետեւ յետ են մնացել:

* * *

Ժամանակի պահանջ—ահա այդուղ պէտք է որոնել Գամառ-Քաթիպայի վայելած ժողովրդականութեան պատճառը, զբանով պէտք է բացատրել նրա մեծութիւնն, ի հարկէ հաշւի առնելով եւ նրա տաղանդը: Նրա նման մտքեր ու զգացմունքներ ունեցողներ շատ կան հայերի մէջ, նրա հոգելից եղբայրների թիւը շատ է:

Ի՞նչպէս քիչ առաջ էլ ասացինք, տաղանդի կամ հանձարի մեծութիւնը կայանում է նրանում, որ կարողանում է ճիշտ ու ամբողջ ծաւալով ըմբռնել ժամանակի լուազոյն, առաջասար ու ապագային հիմք ծառայելու համար կոչւած ճգառուները եւ նրանց շիակաւար ներկայացուցիչ հանդիսանալ, նրանց զլուխ անցնել զործով կամ քարոզել գեղեցիկ ու զբաւիչ ձեւերով:

Այդքան է միայն անհատի գերը, նա նոր բան ըստեղծել անկարող է, նա պէտք է համաչափուի ժամանակի պահանջների հետ եւ իր փոքր ուժով կամ մի քիչ արագացնի կամ գանդաղացնի իրերի բնական ընթացքը: Թէ Գ, -Քաթիպան եւ թէ նրա ժամանակիցը —

Բաֆֆին, կարողացան լիակատար եւ տաղանդաւոր արտայայտիչ լինել մեր ներկայ կեանքի այն բոլոր ձբգտումներին, որոնց անպայման կերպով պատկանելու է հայերուս ևօտաւոր ապագան:

Ո՞ր հայը չի ոգեւորւել ու ոգեւորւում նրանց գրւածքներով...: Այստեղ, բացի տաղանդից, պէտք է որոնել եւ ժամանակի պահանջը:

Երկա՛ր, չա՛տ երկար ժամանակ է, որ հայը հեծում է օսար բոնակալութիւնների լծի տակ: Մեզանում ընդունեած է տակը, որ հայը 500 տարի է կորցրել է իր անկախութիւնը: Կոպի՛տ սիսալ, Զգիտեմ ինչու՞ մարդիկ հաշում են մեր երկրի օտարների ձեռքն սարկանալը Ռուբինեան Կիլիկեան թագաւորութեան անկման օրից: Մեր կարծիքով հայը այն օրից գերի գարձաւ, երբ Բաղրատունեաց հարստութիւնն ընկաւ եւ հայութեան իսկական որրան Մեծ-Հայաստանն սկսեց ոտնակոխ լինել Արաբներից, Խաթարներից, Պարսիկներից, Յոյներից, Սելջուկներից, Օսմաննեան թուրքերից եւ վերջապէս՝ Ռուսներից: Այս երկա՛ր ու ճիկ գարերի ընթացքում հայ երկիրը միշտ եղել է արեան ծով յաւիտենական ու անվերջ սպանդանոց: Դատարկւեց երկիրն իր սեփական բնակիչներից, քայլայւեց հայի տնտեսական կեանքը, իսկ նրա բարյականը եղաւ մշտական նիւթը ու նաբարութեան, Ականքի, ծաղրի ու ծանակի:

Բայց մարդկային պատմութիւնը միշտ եղել է նիւ-
րապաշտ: Ո՞չ կրօնը, ո՞չ բարոյականութիւնը, ո՞չ նոյն
իսկ ավատորիւն կախարդական խօսքը՝ չեն կարող
շարժել մի ժողովուրդ, մինչեւ որ ուրիշ պատճառներ
չգրգեն նրան: Ժողովրդների միակ շարժող ոյժը արն-
աեսականն է, զոյտթեան համար անհրաժեշտ միջոցնե-
րը, որոնք մի տեղ երեւում են իրենց բնական պար-
զութեամբ, միւս տեղ՝ կրօնի քօղով ծածկւած, երրորդ
տեղում՝ բարոյականութեան դիմակը հագած, չորրորդ
վայրում՝ աղատութիւն, ազգասիրութիւն եւ այլ բարձր
բառերի վերածւած: Ամէն տեղ եւ ամէն ժամանակ
շարժումների վերջնական արմատը տնտեսականն է,
կեանքի, զոյտթեան նիւթական միջոցներն են:

Երկա՛ր գարերի ընթացքում հայ ժողովուրդը տարա-
ամէն տեսակ հալածանքներ ու բոնութիւններ, բայց
երբէ՛ք նրա կեանքի նիւթական պայմանները չմտան
այնպիսի գորեղ հակասութեան մէջ տիրող բոնակալ
կարգերի հետ, որքան այս գարի կէսերից սկսած: Դրա
համար էլ հայ ժողովուրդը երբէ՛ք չզգաց տիրող կար-
գերը յեղափոխելու անհրաժեշտութիւնն այն ուժով,
որքան այս գարի կէսերից մինչեւ մեր օրերը: Դեռ
աւելին ասենք, այդ հակասութիւնը երբէ՛ք այնքան
խիստ չէ եղել այնքան անմիտ ու զգւելի ձեւերով չէ
երեւացել որքան վերջին Ռուս-տաճկական պատերազ-
մից յետոյ:

Տաճկահայաստանի ամէնախոշոր մասում գեռ մինչեւ
օր էլ փողի շրջանառութիւնը շատ քիչ տեղ ունի.
Նիւթը փոխում է նիւթի հետ, որովհետեւ արդիւնա-
գործութիւնը գեռ այնքան զարգացած չէ: Ամէն ար-
դիւնագործ ի՞ր սեփական պէտքերի համար է արդիւ-
նագործում եւ միայն իր աւելորդն է ծախում կամ
փոխում ուրիշ բերքերի հետ: Այժմ էլ այդ զրութիւնը
տիրում է քաղաքներից գուրս, գիւղերում ու խուլ
անկիւններում: իսկ 40—50 ական թւերին ամբողջ
երկիրն էր այդ վիճակին:

Կամաց-կամաց եւ բոլովական ապրանքներն սկսեցին
թափանցել աւելի եւ աւելի խորքերը: Քի՛չ-քիչ փողի
կարիքն սկսեց զգացւիլ ու օր աւուր ծանրանալ:

77-ի պատերազմից յետոյ եւրոպական ապրանքներն
աւելի եւս տարածւեցան. յարաբերութիւնները կենդա-
նացան, վաճառականութիւնն ապրանքային կերպարանք
ստացաւ եւ համարեա՛ բոլորվին գուրս եկաւ նիւթերն
իրար հետ փոխանակելու միջնադարեան ձեւեց: Փողը
դարձաւ մի տեսակ անհրաժեշտուրիւն ուտելիք, զգեստ,
կահ-կարասի եւ այլ կենական անհրաժեշտութիւններ
ձեռք բերելու համար: Այս մի կողմից:

Միւս կողմից տաճիկ կառավարութեան յարաբերու-
թիւնները եւրոպական խոշոր պետութիւնների հետ,
նրա պատերազմական եւ



ու մեծ չափով հնջիւն դրամի կարիքն զգալ տւին։
Պէտք էր ճար գանել։ Կառավարութիւնն սկսեց շատա-
ցնել հարկերի տեսակները եւ մեծացնել նրանց չափը։
Այդ բաւական չէր։ Առաջ եղած չնչին հարկերը վեր-
ցւում էին գլխաւորապէս արդիւնքներով կամ նիւթե-
րով, իսկ այժմ հնջիւն դրամի կարիքն ստիպեց
վերածել բոլոր հարկերը գուտ դրամի։ հարկերի բնա-
կան ձեւը փոխւեցաւ եւ ստացաւ փողային ձեւ։

Այս նոյն պատճառները ծնեցրին փողի կարիքը եւ
քրդերի մէջ։ Քրդի կարիքները շատացան, երբ վերջ արր-
ւեցաւ նրանց գերերէկերի խոշոր տիրապետութեանը. . .
նրանք էլ սկսեցին մանրիկ, բայց բազմաթիւ անհատա-
կան ու փոքրիկ խմբական թալանների դիմել. . .

Այս ակնարկւած գործողութիւնն սկսեց 30—50
ական թւերին, գերերէկերի իշխանութեան կործանման
հետ եւ սատիճանաբար զարգանալով՝ 77 ից յետոյ մին-
չեւ 90 ական թւերը՝ տեց իր պառւզները։

Երկրի արդիւնապործութիւնը ոչնչով առաջ չդնաց,
միայն դրամի կարիքը խստացաւ, հարկերը ծանրացան,
թալանն ու տւապակութիւնն աճեց. . . եւ այս ամէնը
չնորհիւ եւրոպական ապրանքների մրցման, չնորհիւ
տաճիկ պետութեան եւրոպական քաղաքականութեան
ալիքների հետ զարնւելուն։ Սա եւրոպական եւ ստիա-
կան արդիւնապործութիւնների մրցումն էր։

Մրանեք են անտեսական հիմքերը։ Աւելացրէք գրանց
վրայ կոռն ու բեկարը, օլամն ու անկարեան, գօրքերի,
զարթիէների թալանը. . . եւ սրանց անհրաժեշտ արդիւնք
բոնաբարութիւնը, լլկանքը. . .։ Աչքի առաջ ունեցէք
այս ամէնը եւ այն ժամանակ պարզ կը լինի, որ հայ-
կական կեանքը ճակատագրաբար պէտք է գիմէր դէպի
յեղափոխուրիւն։

Եւ ահա Տաճկահայաստանի ազատութեան ինդիրը
դարձաւ հայ կեանքի ժամանակի պահանջը։

Հայ չարժումն սկսեց շատ փոքրից, ինչպէս ամէն
երեւոյթ. կամաց կամաց աճեց եւ միայն 80—90 թւերին
ստացաւ իր այսօրան սուր կերպարանքը։ Քանի զեռ
նա նոր էր, քանի զեռ տիրող բռնակալ կարգերը եւ
օր աւուր աճող անտեսական նոր պահանջները չէին
պայմել իրենց ամէնքի աչքը կուրացնող եւ ականջը
խլացնող զօրութեամբ՝ նրա, այդ նոր պահանջի վրայ
շատ քչերը կարող էին ուշք գարձնել, աւելի եւս քչերը
կարողանում էին իրենց մտաւոր աչքերով տեսնել կամ
զգացմունքով ըմբռնել։ Այստեղ արդէն օգնութեան է
համառում ընածին տաղանդը։

Մեր բանաստեղծներից սուաշինը եւ միակը եղաւ
գ. Քաթթիպան, որ իր անգուգական բանաստեղծութիւն-
ներում սկսեց երգել թարգման հանդիսանալ հայկական
ազդ նոր պահանջին։

Դուրս թռաւ Պարսկաստանի մութ անկիւններից նրա հսկայ ժամանակակիցը—Բաֆֆին։ Եւ մէկն իր երգերով, միւսն իր վէպերով՝ ներդաշնակ հնչում էին նոյն երգը, նոյն զգացմունքները. խփում էին հայի նոյն ջղերին։

Նրանք երկումն էլ ըմբռնեցին ներկայի նոր ծնառզ պահանջները. սկսեցին զուգահեռաբար գնալ այդ նոր պահանջների հետ, դաշնակցել, գլուխ անցնել նրանց եւ իրենց զօրեղ զրչով քարոզել նորը, թարմը, քանդել հինն ու փթածը, նորին արգելք հանդիսացող նեխւած իրականութիւնը; Շուտով նրանք բաց արին հասարակութեան զարգացած փոքրամասնութեան աչքը եւ զգացրին օր աւուր աւելի ծանրացող պայմանների անտանելիութիւնը։

Տաճկաստանում աիրող կարգերն աւելի եւ աւելի ծանրանում, կապարի նման ձնչում էին հայ հասարակութեան սիրտը։ Խոկ այդ երկու հսկաներն, իրենց նոր կազմակերպւող բանակով՝ աւելի եւ աւելի ոյժ էին ստանում, աւելի եւ աւելի զօրեղ հնչիւններով անհանդասացնում էին հայի ականջն ու խիղճը։ Դրութիւնն սկսում էր անտանելի դառնալ, իսկ քարոզներն աւելի կծու, աւելի թունաւոր ու ոգեւորիչ։

Նրանց երկուքի ստեղծած նոր հոսանքը յանգեցաւ յեղափոխութեան։

Մեր ծրագրից դուրս է կանգ առնել Տաճկաստանում եղած գործիչների վրայ։

* * *

Թողնենք մի կողմ օտար գրականութիւններից սարկաբար փոխ առնւած մտքերը եւ լաւ նայենք մեր յեղափոխութեան իսկական ներկայի վրայ։ Շա՞տ ենք արգեօք առաջ գնացել Բաֆֆու Սահրատից (Զալալ-կղզին), Կարօից, Ալանից, Ֆահրատից (Կայծեր) եւ այլն, մի՞թէ մեր այսօրւան բոլոր յեղափոխական շարժումները մի տեսակ հաւատարիմ իրականացում չեն անմահ Բաֆֆու վէպերի. . . Մի՞թէ մենք աւելի ենք առաջ գնացել մեր Գ. Քաթիպայի հետեւեալ մտքերից։

Ազատ լալ կուզես, զիտել փափաթի,
Բայց դու մի՛ յուսալ հասնել այդ օրին.
Ո՞ւր է, դու զիտե՞ս, բաղդդ ու փառիդ
Ու ազատ կեանիդ. —ի ծայր յո սուրիե. . .

Լսեցէք, թէ ինչ է ասում նա մի ուրիշ տեղ.

Մինչեւ որ ինիդ յաշես յո զիտու նարը,
Եր՞բ պիտի օգնէ իեզի օսարը։

Նրա ստանաւորներում ամէն տեղ սփռւած են այն-պիսի մտքեր, որոնք այսօր անդագար կրկնուում են մեր բոլոր գոյնների յեղափոխական մամուլից։ Քանի՛ քանի

գեղեցիկ ձեւերով կրկնել է մեր բանաստեղծը, որ «պէտք է մի անգամ թափել առաստ արիւն եւ ընդ միշտ գաղթեցնել հայի սուզն ու լացը»: Քանի՛ քանի անգամ ...

Խեղճ հայ մարդ.

Դու մի անգամ մեռնեղոց վախցար,
Մինչ մահան օրդ հազար մահ տեսար...

Առելի լաւ չէ՞ր լինի մի անգամ ցնցւէիր, մի անգամ հեղեղէիր քո վեհ հայրենիքդ քո ալ արիւնով եւ փըշ-րէիր այն կապանքները, որ արգելք են լինում քո ազատ առաջադիմութեան:

Նա նկարագրում է տաճկահայի գրութիւնը եւ այդ նկարագրութիւնը կրմայ իր մի գասական (կլասիք) կաոր: Լաեցէք, «Ղարիբ մշեցին» է խօսողը.

Հայ ազգը մեր տեղը նեղ օր կը բաշ,
Օսմանին ու ինրդը կեանելերս կրիաշէ.
Օր կըլլայ՝ գերկվար կանէ մեր տղոց,
Օր կըլլայ՝ արտերս ձգէ կրակ ու բոց...

Մի քիչ վարը՝ շարունակում է.

Շատ տառապանի բաշեցին դուշմանի զենքնեն,
Շատ ալ մաս դուշմանը կերաւ մեր ձեռքնեն,
Առանց ատր աշխարհը մեր չէ՞ր բազմանարդ
Հիմի փուշ կրբանի, ուր առաջ եր վարդ...
Նկարագրում է զարիբ մշեցին իրերի տխուր գրութիւնը.

Հայութիւնը փշանում, ցիրուցան է լինում. երկիրը խոպանանում՝ վարդի տեղ՝ փուշ է տալիս... նկարագրելը բաւական չէ. նա կոչ է անում աւելի երջանիկ ապրող ուռասհային, հրաւիրում է օգնել իրենց եւ նոյն իսկ միջոցներ է ցոյց տալիս.

Թէ չօգնէի՛ մենի ալ շուս կըլլանի ցիրուցան.
խղճացի հայ ազգին սկզ մեզ ՀՐԱՅԱՆ.

Նա հանգուացնում է գրամի գերի մեր հարուստներին.

Բայց մենի ձեր սենուկի փողին կարս չեմ,
Հա՛յ եղբարք, շնորհեցի դուք մեզ մեկ-մեկ ԶԵՆՔ:

Մեր ո՞ր յեղափոխական կուսակցութիւնն այս մըտքերից աւելին է քարոզել հայ ժողովրդին... առանց հաշւելու օտարներից գողացած անմարս մտքերը... սա մի՞թէ ուղղակի հրաւէր չէ զինելու տաճկահայը եւ խմբական մի զինւած ապաւերութիւն առաջացնելու:

Նկատելու արժանի է, որ Գ. Քաթիպան իր բանաստեղծութիւններում երեւում է լոկ իբրեւ հայ ազգաներ, դուռ հայկական անկախութիւն քարոզող, ինկ նրա մեծ ժամանակակիցը—Ծագֆին, դուրս է զալիս իբր աւելի լայն հայեացքների տէր. յաճախ նրա գրածքներում փայլում է այն միտքը, որ պէտք է ձգտել ոչ թէ դուռ հայկական ազգային անկախութեան, այլ տաճկահայաստանի բոլոր ժողովրդների ներգաշնակ ազատութեան:

Մեր կաթիքով՝ այս տարբերութիւնը առաջանում է նրանից, որ Բաֆֆին աւելի մօտ ծանօթ էր տաճկահայաստանի ներքին պայմաններին, քան Գ. Քաթիպան:

Գ. Քաթիպան արտայայտում է միայն հայի արեան ու անկախութեան ձգտումը, իսկ Բաֆֆին ե՛ւ այդ, ե՛ւ հայ կեանքի մի քանի աւելի լայն ձգտումները, ինչպէս, օրինակ, կրօնական խնդրում, հոգեւորականների ամուսնութեան վերաբերութեամբ, հասարակական գաղափարական կամ գէ՛թ աւելի տանելի կազմ ստեղծելու գործում եւ այլն: Յիշեցէք նրա միայն մի միտքը «Զալալ-էզգին»ում արտայայտած. «Աւազակը բողոք է եղած անարդար հասարակական կազմակերպութեան դէմ»...

Երկուսի մէջ տարբերութիւններ շատ կան, բայց նմանութիւնն աւելի խոշոր ու աչքի գարնող է:

* * *

Մեր ոռւսահայ գրականութեան « Գիլիստէրները՝ »— « Մեղուն » իր տիրահանչակ քննադաս Հայկունիով « Նոր-Դարն » իր թերուանների ամբողջ գնդովը՝ պապանձեցան, երբ տեսան, որ ամբողջութեան համակրութիւնը Բաֆֆու կողմն էր: Մի ուրիշ գիլիսերական թերթ—« Արձագանք՝ »ը՝ ի՞նչպէս աղէսի խորամանկութիւնով ուզեց օգտել ժամանակի ոգու արտայայտիչ

Գ. Քաթիպայի « Աստառ » պամֆլէտից, տպելով այն հեղինակի մահից անմիջապէս յետոյ:

« Արձագանք՝ »-ը չէր մտածում, որ իր այդ լկտի վարմունքով ոչ միայն ձգտում է ստեղ գցել մի յարդուած կենդանի գործչի—Պրիգոր Արծրունու (†) վրայ, այլ եւ մի այնպիսի մօտիկ հանգուցեալի—Բաֆֆու վրայ, որի գագաղը փշուում էր համակրական պասկների ծանրութեան տակ, որ ուզարկել էր երախտագէտ հայ ժողովուրդը իր ձգտումների լիակատար արտայայտողին: Ուղրմելի՛ ուզեղ, որ ամէնահասարակ հաշիւնների մէջ անգամ այդքան կոպիտ սիսալ է անում:

Բայց այս բոլորը վկայում են, որ Գամառ-Քաթիպան ու Բաֆֆին ժամանակի հոսանքի առաջնորդները, նրա լիակատար արտայայտիչներն էին: Այդ խոստովանում են մեր մէջ եղած բոլոր ուղղութիւնների (Ած. ուղղութիւն համարէ) թերթերը, մի քանիսն իրենց պարզ խոստովանութիւններով, միւսներն իրենց վարմունքով, « կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անդիտութեամբ »:

(*) Պ. Արծրունին այն ժամանակ դեռ կենդանի էր:

III

Ասացէք ամէն մի հայ ընթերցողի «Սիւլիկ», Միքայէլ Վայելչեան, Աղթամերկեան եւ նոյն իսկ Ռափայէլ Պատկանեան անունները. նա դեռ բաւական կըմտածէ, որ անդրագաւանայ այդ անունների վրայ, որ յիշէ, թէ ո՞վ է դա, ի՞նչ մարդ: Բայց ասացէք «Գամառ-Քաթիսա» եւ ամէն մի նոյն իսկ կիսագրագէտ հայ իսկոյն կըհասկանայ, թէ ո՞ւմ մասին է խօսքը: Ամէնքի սրառում իսկոյն արձագանդ կըտան նրա «Մայր-Արաքսի»ն, նրա «Ազոթարանը», նրա «Հայի գանգապարը», նրա «Բաւ է եղբարքը» կամ «Հայերուս թուքը» եւ այլն, եւ այլն: Արանք եւ նրա միւս երգերն այժմ մեղանում տարածւել ընկել են եւ հարուստի ճոխ ապարանքը, եւ աղքատի մերկ խրթիթը, անդրագէտների բերանը:

Ի՞նչու՞ ամէն հայ յուզմունքով ու ոգեւորութիւնով է երգում Գ. Քաթիսայի երգերը: Ի՞նչն է նրան կախարդողն ու յուզողն այդ երգերում:

Պարզ է. այդ երգերը երգող եւ ոգեւորուզների ու նրանց հեղինակի զգացմունքների մէջ կան շատ նման կէտեր:

Այո՛, շատ-շատ են Գ. Քաթիսայի բանաստեղծութիւններով ոգեւորուզները, նրանց մէջ եղած զգացմունքների նման զգացմունքները ունեցողները: Եւ այդ

թւի շատութիւնն է պատճառը, որ նա այժմ ընդհանուր է հայի համար, որ նա մեծ է մեր բոլորի աշխում, որ նրա զերը հերոսի զեր է, հերոսի՝ որ քաշում, տանում է իր ետեւից ամբոխին, ոգեւորում նրա բոլոր խաւերը:

Ամէն մի հայ, որքան էլ նա տարբեր խելքի, տարբեր հասկացողութեան ու զգացմունքների տէր լինի, անպատճառ կունենայ մի ընդհանուր կէտ Գ. Քաթիսայի հետ... ի հարկէ խօսքս ընդհանրութեան մասին է եւ ոչ զանազան հրէշաւոր բացառութիւնների վերաբերութեամբ, ինչպէս Աշրջեանները, Մամբրէները եւ նրանց նմաններն են:

Ժամանակի պահանջներին բաւարարութիւն տուղ զգացմունքներն ամփոփուած են նրա «Բանաստեղծութիւններ» ուում եւ ոչ նրա «Ուխտաւորի նամակների», «Սատանայի օջիլի», «Ես նշանած էի»—ի, «Գիրգոր Կայիաբայի» կամ «Աստառի» մէջ: Դրա համար էլ հային ծանօթ ու պաշտելի են նրա «Բանաստեղծութիւնները», նրա «Ազատ երգերը». դրա համար էլ միայն դրանք են հային յուզողն ու ոգեւորողը: Մեր ներկայ արիւնոտ պատմական շրջանում հայի միտքն ու հոգին այդ հարցերով են բանւած, նրա զգացմունքներն այդ խնդիրներով են համակւած... զո՞նէ արագ համակւում են ամէն օր, ամէն ժամ. . . :

Լաւ հետեւցէք մեր հասարակ դասակարգի ընթեր-

ցանութեանը: Գիտէ՞ք ամէնից շատ ինչով են ոգեւորւում Բաֆֆու «Ոսկէ Ա.քաղալը» կարդալիս: Ստեփանով, նրա «բազմաթիւ մայրերի ձայնին ու աղաղակին օդնութեան հասնելովը» եւ ապա միացած բոլոր գեղարւեստական մասերովը:

Դա ժամանակի պահանջն է, եւ հայր, առանց դրան՝ երբէք չի բարձրացնի ներկայ ըրջանում մի բանաստեղծի կամ հեղինակի մինչեւ հերոսութեան. երբէք սրտի խորքից չի ոգեւորւի նրա գրւածքներով, եթէ այնտեղ չինին գո՞նէ ակնարիներ այդ «բազմաթիւ մայրերի ձայնի» մասին. . . կըկարգան, գուցէ եւ կըհաւանեն գրւածքին, բայց իսկոյն կաւելացնեն. «Գամառ-Քաթիպային չի գայ», «Ռաֆֆուն չի հասնի»:

Պատմական այս տեսակ շրջանում գրելու փո՞քը ինչ ձիրք ունեցող, խղճուկ գրչակներն անզամ կարող են դրաւել ընթերցող դասակարգի սէրն ու համակրութիւնը. բաւական է, որ նրանք հասառութիւնով գուշակեն ժամանակի պահանջները եւ աշխատին փո՞քը ինչ շընորհքով արձագանգ տալ նրանց կամ ընդօրինակել մեծ ու իսկական գրողներին: Ի՞նչ զրական արժէք ունին վ. Փափաթեանի «Լալօ»ն, «Ճկնաւոր Եղօն», «Սասունցի Օհանը», «Թօփալը», «Ենիշերին» եւ այլն, կամ Լէօ-ի «Սպանւած հայրը» եւ կամ Յ. Ղաղարեանի բոլորովին անդրագէտ կերպով գրած «Թասիր»-ը. . . : Ասացէք,

ինպիրեմ, ի՞նչ բանաստեղծական արժէք ունին Լեռենցի «Ոտանաւորները», նրա վայրենի լեզւով եւ ամէն տեսակ գեղարւեստից զուրի պօկէները. . . բայց արի տես, որ դրանց բոլորի նիւթը կամ տաճկահայի կեանքը կամ այժմ հայի սրտին շա՞տ մօտ արիննեն ու դաշոյնը, հերոսական ու ապագական ձգտումները, վաշխառուի կողոպուտը, Ենիշերու կամ Ալիի բոնաբարութիւններն են. . . . Եւ հայր ոգեւորւում է դրանցով, կարգում փառարանուում է այդ խղճուկ գրչակների թխովի գործերը:

Մի աւելի խիստ օրինակ: Ո՞վ կըկարգար Ա.տրպետի «Խեւ կարապետը», նրա հաստափոր «Ալմաստը», «Շուշան»ը, «Փող Եղիկը» եւ այլն, եթէ նիւթերը վերցւած չինէին տաճկահայի կեանքից. . . : Ոչ ոք, բացարձակ ոչ ոք:

* * *

Մեռաւ Բաֆֆին, մեռան Գ. Քաթիպան. Նրանց տեղերը բաց մնացին:

Ի՞նչու՞ չկան նրանց փոխարինողներ: Զէ՞ որ ժամանակի պահանջները ծնեցնում են իրենց լ բաւականութիւն տւողներ. չէ՞ որ այդ օրէնքը եղել է միշտ մի ճակատագրական անհրաժեշտութիւն մարդկային պատմութեան ընթացքում—կըհարցնեն մեզ:

Այսո՛, ամէն մի ժամանակի պահանջնուում է նաեւ

իր լիակատար արտայայտողին, կամ խօսքով, կամ գործով իրականացնողին։ Ամէն մի չըջան պատմութեան մէջ ստեղծում է իր հերոսներին։ Փրանսիական Մեծ Յեղափոխութիւնն ունեցաւ իր Վօլտերը, Ռուսան, Միրաբօն, իր Դանաօնը, Մարատը, Ռոբէսպիէրը. կրօնական բէֆօրմասիօնն ունեցաւ իր Լութերը, Կալվնը, Կոնդըր, Ցիվինդլինը եւ այլն։ Այդ օրէնքը կայ. Ճշմարիս է։

Բայց կայ եւ մի ուրիշ դիտւած օրէնք։ «Մի ազգի, մի գասակարգի եւ նոյն իսկ մի անհատի կեանքում գրականութիւնով կամ գեղարւեստներով ողեւորւելը երբէք չի երեւացել եռանդի չափազանց լարման, կամ ծանրակշիռ գործնական խնդիրների, գործնական հճրուզիազմի նախընթաց օրը, որովհետեւ ճաշակի գասարկ բաւականացումը չի կարող միատեղ լինել գործնական ձգութիւնների հետ», ասում է Էմիլ Հէննըկէնը («Էստոպ-սիլսօգիթա», առևերէն թարգմ. երես 110)։

Դրա վրայ մենք կաւելացնենք. —որովհետեւ այդ տեսակ ժամանակներում հասարակութեան բոլոր եռանդը լարում է գէպի մի որոշ կէս։ Ծանր գործնական խնդիրը պահանջում է համարակական եռանդի ամբողջ գումարը եւ ամէն մի գործող անհատ ոտից մինչեւ գլուխ, բոլո՞ր, բոլո՞ր ջղերով համակւած է լինում մի հարցով՝ ժամանակի մեծ խնդրով։ Եւ ուրիշ կերպ

չէր էլ կարող լինել. ու՞ր է այն հսկայական ոյժը, որ մի քանի տեղ բաժնւելով՝ ամէն տեղ էլ աչքի ընկնող չափ ունենայ, ամէն տեղ էլ պէտքական կշիռ բանէ։ Աա է պատճառը, որ մեծ գործնական խնդիրների իրականացման նախընթաց օրերը միշտ լինում են կրքոտ ու միակողմանի։ Այդ է պատճառը, որ այսօր մեր գրականութեան մէջ տիրուժ է կատարեալ ամայութիւն եւ մեռնողներին փոխարինողներ չեն երեւում։

Կորուսար, ընթերցող, շատ էլ մեծ չէ. այդ փաստն ինքն ըստ ինքեան միսիթարական է։ Կորցնում ենք դրականութեան, խօսքի հսկաներ, ձեռք ենք բերում նոր ու թարմ հսկաներ մի ուրիշ տեղ, մի այլ ասպարիզում—յեղափոխութեան արիւնելայ ասպարիզում։ Մեռաւ նշերենցը, մեռան Բաֆֆին, Գ. Քաթթիպան եւ այլն, ծնւեցին Կուկունեաններ, Մարգար վարժապետներ, Յոնոններ, Սրաբօններ, Մուրատներ, Բարկէններ, Պետօններ Զհանդիւեաններ, Տաճատեաններ. . .

Այս երկու շարք գործիչներից որոնք են աւելի գնահատելի. մտքի՞ գործողները, որ աւելի առաջընթաց են ժամանակապրական կարգով, մի տեսակ ծնող հայր են, թէ՞ գործնական կետալիքի հսկաները, որ ուզում են իրականացնել կամ իրականացնում են ամբողջութեան փափաքը, նրա գուրգուրած տենչանքները. . . համեմատել այդ երկուսը՝ կընչանակէ համեմատել իրար հետ երկու

օտար էութիւններ. կընչանակէ իրար հետ գումարել կամ իրարից հանել 15 տանձ եւ 9 սեղան. դա դէմ է թւաբանութեան ու տրամաբանութեան սկզբնական կանոններին: Նրանք երկուսն էլ իրենց ժամանակի պահանջների արդիւնք են եւ ունին իրենց տեղերը, համեմատել նրանց իրար հետ անկարելի է:

IV

Թարգմանեցէք, շարադրեցէք եւ տւէք ժողովրդին կարգարու փափուկ, նուրբ ու ազնիւ գեղասիրական գրւածքներ. տւէք նրան ներքին յուղերի, երկուութեան եւ սկեպանցիքմի ճշգրիտ պատկերները. նկարագրեցէք ժամանակից արխատօկրատի կամ բուրժուայի ներքին մաշող հարցերը. տւէք նոր գեմօկրատի կամ սօցիալիստի տիպը... եւ այդ ամէնը որքա՞ն կուզէք գեղեցիկ ու ճիշդ լին՝ միեւնոյնն է—այնքան էլ չի գրաւի հայ ընթերցողին:

Բայց տւէք նրան ասպետական գրւածքներ. տւէք նրան Հոռիթ եւ Յունաստանի կլասիք հայրենասիրութեան օրինակներից, բոլգարական յունական անկախութեան պատմութիւններից. տւէք նրան մի գրւածք, որի մէջ մարդը երեւար իր քաջ, անձնագոհ, ասպետական ու արիւնուշտ կողմերով՝ եւ նա, կարգալուց յետոյ, շըրթունքները կըլից, կոգեւորւի:

Այս փաստը չափազանց սուր եւ գեղեցիկ կերպով է նկատել մեր անմահ բանաստեղծը. նրա սուր հայացքից չէր կարող փախչիլ մի այնպիսի ձգտման կէտ մեր ժողովրդի մտաւոր-բարոյական աշխարհում, որ ծառայել է մեր բանաստեղծի բոլոր ոտանաւորներում իբրև ծանրութեան կեդրոն. այդ կէտին է նա միշտ խփել թէ՛ աշկարայ, թէ՛ քօղարկւած կերպով՝ ստիպւած հիւսիսի սպիտակ բռնակալի ճնշումներից:

Կարգացէք նրա «Օրօրոցի երգը», ուր այդ կէտը խիստ որոշ ու հրաշալի պատկերներով է արտայայտած: Այդ երգն արգէն տարածւել է ամբողջ Կովկասում, ընկել ամբոխի բերանը:

Այդ ոտանաւորում՝ դուրս բերւած մօր որդին չի քննում. լայ է լինում: Մայրը կանչում է սոխակին, արեղաձագին, տարավակին ու կաչաղակին, որ իր զաւակի համար երգեն ու քննեցնեն նրան: Բայց ո՞չ սոխակի դայլայլիկը, ո՞չ արեղաձագի մրմունջը, ո՞չ տարավակի վո՞յ-վո՞յը եւ ո՞չ էլ կաչաղակի «շահի զրոյցները» կարողանում են կարել մանուկի լայը, քննեցնել նրան: Նա չի ուզում տիրացու, արեղայ, սգաւոր կամ վաճառական զառնալ: Նա մոռացել է երկա՛ր ու երկար ժամանակ հային իբր իդէալ ծառայող տիրացու, արեղայ կամ վարդադետ անունները. նա չի ուզում նոյնպէս զուր տեղը լալկան-սպաւոր դառնալ կամ ոսկու եւ

արծաթի հետ խաղալ, կշեռք բռնել, արշին չափել...
դրանք նրան այլեւս չեն գրաւում. դրանք դադարել են
նրա համար այլեւս ցանկալի լինելուց: Նոր սերնդին
մի այլ բան է գրաւում. . .

Եւ ո՞րքան հիմնալի է բանաստեղծի արտայայտու-
թիւնը, ո՞րքան կարծ, ազգու եւ գեղեցիկ: Մայրը
որսատեղից կանչում է «քաջասիրտ բազէին», կեռ կը-
տուցն ու սուր ճանկերն արեան մէջ շաղախուած՝ մտա-
ծելով, որ գուցէ որդին այդ է ուզում. նրա երգերով,
պատերազմական տաղերով կըքնի: Եւ ի՞նչ.

«Բազեն որ եկաւ, որդիս լուեցաւ»
«Ռազմի երգերի ձայնով լուեցաւ»:

Այս, գեռ որրանի միջից նոր սերնդին աւելի է
գրաւում բազէի աներկիւղ արիութիւնն ու քաջութիւնը,
նրա կեռ, ամուր կտուցն ու ճանկերը, քան սոխակի
մեղեղիներն ու դայլայլիկները. նրան աւելի է դուր
գալիս այն, որ ծիան ու աղաւնին թլպլում, արեան
մէջ են լողում բազէի յաղթական ստերի տակ, քան
սոխակի հոգեղմայլ սիրային ճուողները, քան նրա գու-
րեկան, հազար ձեւերով կրկնուող աննման կլկլոցները,
քան աբեղայի վեղարը, նրա աղօթքի մրմռւնջները, քան
նոյն իսկ նրա լիան ու Աւետարանը: Նոր սերնդին
գրաւում են սարսափեցուցիչ ճակատարաւները, նրա-

ցանը, գաշոյնը. նրան հրապութում են անշնչացող դիակ-
ները... արեան զորոշիները: Եւ այս ամէնը ազատու-
թեան սրբազն գաղափարի համար. . . :

Սա ճաշակի կոպտութիւն չէ, ո՞չ էլ տպիտութեան
կամ ասխական վայրենութեան արդիւնք. սա արդիւնք
է պատմական երկա՞ր շրջանների ստեղծած իրերի ներ-
կայ դրութեան: Սրա մէջ պէտք է որոնել մեր կեան-
քում տեղի ունեցող շատ տարօրինակութիւնների
արժատը:

Մեր ժողովրդի միջից կամաց-կամաց գուրս են ընկ-
նում լաց, կոծ ու աղաչանք արտայայտող մուրացկանի
երգերը: Նրանց տեղն արագութեամբ բռնում են Գ.
Քաթիպայի խրախուսիչ, յեղափոխական երգերը, հան-
գուցեալ երիսասարդ Ք. Թագէսոսեանի «Երբ ալէկոծ»ը,
«Տուր ձեռդ, եղբայր»-ը եւ այլն: Ո՞վ չի լսել կամ ո՞վ
չի երգել «Զայնը հնչեց»-ը. սրանից էլ աւելի անճաշակ
բանաստեղծութիւն. բայց մեզանում սրանից էլ աւելի
սիրւած ու արածւած երգի քիչ կը պատահիք: Սրանք
պարզ նշան են, որ մեր ժողովուրդն արդէն ըմբռնում է
բանաստեղծի հետեւեալ խօսքերը.

«Ազա, անկախ մարդ երբեք
«Լինելու չե մուրացկան»:
կամ «Ես շնորհ չուզեմ, ասաց Արաւաս,
«Օսարի փշրանի շան առջեւ զցած:

Սա ծերուկ մասիսն է, «Ազատն Մասիս»։ Նա չի ուզում օտարի չնորհը, նրան զգւելի է ուրիշի սեղանի վշրանքը, դա «շան առաջ պէտք է գցել»։ Ազատ Մասիսին մի բան է միայն հարկաւոր. այն՝ որ իր որդոցը «պէտք է սովորել մի անգամ թափել արիւն յորդառաստ»։ Այդ է Ք. Քաթիպայի ոդին, նրա քարոզածը։

* * *

Առաջ բերենք մի երկու փաստ, ասածներս աւելի պարզելու համար։

Երկրասեան գպրոց աւարտած մի խումբ օրիորդների կարգում էի «Դաւիթթ-բէկ»ը։ Բնդիանուր ուժերով աշխատում էինք քննել նրա մէջ եղած տիպերն ու գաղափարները։ Գիտէ՞ք ամէնից չատ ինչը գրաւեց իմ լսողներին ամբողջ զրքում։ Այն որ մի գեղջկուհի ընդունում է իր տունը Դաւիթ բէկի ձեռքից փախչող Դաւիթ Ուրացողի որդուն, նրան քննելու աել է տալիս մարագում եւ յետոյ, երբ նա քննում է, վերցնում է կինը մի մեծ բեւեռ, դնում քնածի ճակտին, թոխախով խփում, ուղեղը ծակում ու սպանում. . . մի գործողութիւն, որից աւելի գաղանական բան քիչ կարելի է երեւակայել։ Եւ սա չափազանց դուր եկաւ նրանց մատաղ կանացի սրտերին. ուրացողի որդին էր պատժում. . . իր ազգի դաւաճանը. . .

Այն բանը, որ բոլորովին վիրաւորում է մարդու մարդկային արժանաւորութիւնը, նրանց աչքերում փայլեցնում էր մի տեսակ կատաղի, զաղանական փայլ։ Ընթերցող յիշու՞մ ես «Դաւիթ բէկի» մէջ կրթւած ականջի համար անտանելի այն կտորը, երբ մի խափչիկ աղախին մտնում է գիշերով Սիւրիի վրանը, նրա կոկորդը մկրատով կարելու համար։ Այդ խափչիկ կնոջը, որ չորս թաթանի է զառնում վրանի տակից անձայն ներս մտնելու համար, Բաֆֆին նմանեցնում է մի «ճած շան», որի ստիճաները կախ են ընկնում ծննդաբերութիւնից յետոյ»։ Այս վերին աստիճանի անձաշակ եւ մարդկային արժանաւորութիւնն ստորացնող պատկերն ու համեմատութիւնը գուր էր գալիս իմ լսողներին այնքան, որքան եւ Տաթեւի առաջնորդի հրաշալի քարոզները, Բայանդուր իշխանի կոպիտ ու վայրենի քաջութիւնը եւ այլն։ Դա նոր ծնւող ազգային զգացմունքն էր, որ խօսում էր նրանց մէջ։

Մի խումբ բանւորների այն աստիճան գուր եկաւ ու ոգեւորեց Հոռմի հարազատ զաւակ Հորրացիոսի իր քրոջը ազգային պատիւր վիրաւորելու համար՝ զաղանաբար սպանելը, որ նստած տեղից վիր-վեր էին թըռչում. . . Հայրենիքի սէրն էր խօսում նրանց մէջ։

Առիթ եմ ունեցել ուրիշ շատ գէպքերում եւս ստուգել նոյն երեւոյթները։ Ամէն անկեղծ հայի մէջ ճա-

շակի նմանութիւն կայ այդ տեսակ հարցերում։
Յիշեցէք «Զալալ-Էդղին»-ի հերոս Սահրատի եւ
նրա մեռնող հօր հասկացողութիւնների, նրանց ուղղու-
թիւնների տարբերութիւնը։ Ո՞րքան իրարից տարբեր,
ո՞րքան հակադիր են նրանք։ Սահրատը նոր սերնդի
մարմնացումն է, նրա ձգտման կէտը, որ նոր է սկսում
կերպարանք ստանալ եւ իրականանալ կեանքի մէջ, իսկ
նրա հայրը հոգեվարքի հասած հին սերնդի ուղղութեան
ներկայացուցիչն է։

Վերջապէս յիշեցէք մեր բանաստեղծի «Մեծ»-ը։
Հայրը որդուն երբէք մեծ մարդ տիտղոսը արժան չի
համարում տալ, թէեւ նա, չնորհիւ իր խելքի ու ջանքի,
գառնում է հարուստ, գիտնական, հրաշագործ ու արդար,
հսկյ ու քաջ, յաղթող զօրավար ու լաւ քաղաքագէտ։
Որդին տանջւում է. «Հէ՞ր չարժանացաւ հօր զովասան-
քին»... եւ, երկար մտածելուց յետոյ՝ գտնում է։

Նրա եղբայրը գերի եր լնկած,
Թշնամու ձեռփող տունը աւերած.
Ճիզ արաւ, զլուխը վտանգի դրեց.
Եղբօն ազատ ու տունը կանգնեց։

Այդ էր իր պարտականութիւնը. նա կատարեց, իր
գլուխն անզամ վտանգելով։ Եւ ահա—
Յանկարծ ար ու ձոր, ծովի դդրդեցան,

Բիւրք բիւրոց բերանով կոչեց ազգ մարդկան.
«Մեծ» մարդու անուն ա'յժմ դու սացար,
Եղբօրդ յիշեցիր ու ժեզ մոռացար։

Իսկ եղբօրն յիշել, նրան գերութիւնից ազատել կարելի
է միայն արեան ճանապարհով։

Միշտ մի ծայրայեղութիւնը ծնեցնում է մի ուրիշ
ծայրայեղութիւն. ուսկեայ միջուկը գոյութիւն չունի
ժողովրդի կեանքում։ Նոյնը կատարում է այժմ մեզա-
նում։ Մինչեւ օրս ծայրայեղ վախ արիւն տեսնելուց,
որ տեղի է տւել թուրքին իրաւամբ ասելու —«Էրմէնի
զան գէօրտի» (հայը արիւն տեսաւ), իսկ այժմ դրա
հակառակ ծայրայեղութեան ձգտումը եւ նոյն իսկ մա-
սամբ գործնական իրականացումը. . . :

Վերջապէս հայն զգաց, որ հերիք է որքան ինքը
ոյխար եղաւ, պատառուեց չներից ու գայլերից. այժմ
նա' էլ է ուղում զայլ դառնալ պատառել կամ գո՛նէ
չթողնել, որ իրեն պատառուեն անմեղ տեղը։ Իսկ այս
աշխարհում այժմ անկարելի է ազատ մնալ մինչեւ ու-
րիշներին չըատառուեն։ Այդ էլ իր կողմից պահան-
ջում է քաջութիւն, աներկիւղութիւն, անձնազոհութիւն
զինւած դիմադրութիւն. . . :

Թերթեցէք բանաստեղծի ոսանաւորները. նրանց
մեծամասնութիւնը նւիրւած են ազգայնութեան վերա-

ծնութեան, քաջութեան, անձնազոհութեան խնդիրներին: Եւ ո՞րքան բնական ու հասկանալի է, տարածւել են միայն այդ նիւթերին նիւթւած ստանաւորները...:

Թող հաղար տարի վիլիսերները բզաւեն, որ Գ. Քաթիպայի մեծութիւնը կազմում են նրա «Գիրգոր Կայիաբան», «Սատանայի օջիլը», «Աստառը» կամ «Ուխտաւորի նամակները»: — Թող պնդեն, նրանք ոչ ոքի չեն կարող համոզել: Այդ գրւածքները մեծ մարդու յաճախ խոշոր սխալներն ու թերութիւններն են: Մեռաւ պօէտը, նրա հետ թաղւեցան եւ նրա այդ գրութիւններն ու սխալները, անմահ մնացին նրա արժանաւորութիւնները, նրա «Ազատ Երգերն» ու «բանաստեղծութիւնները»:

Y

Այժմ ծագում է մի ուրիշ հարց:

Մի՞թէ կարելի է մի գրողի մեծ համարել, նրան պաշտել երբ նրա գրւածքները որոշ չափով քարացնում են մարդու սիրու, շոյում նրա գաղանական արիւնածարաւ բնազդները: Մի՞թէ կարելի է սիրել Գ. Քաթիպային կամ Ռաֆֆուն, երբ սրանց իւրաքանչիւր տողից արեան հոտ է փչում...:

Մէկը քարոզում է, որ իր որդուն խաղալիկների փոխարէն

Հայրը ձեռքը պիտի տայ
Մի մահաբեր հրացան:

Ոչ միայն քարոզում է սովորեցնել երախային հրացանի ու գնդակի հետ խաղալ ամէնամատաղ, ձձկեր հասակից՝ այլ եւ իրեն նշանաբան, հաւատոյ հանգանակ է ընարում կարգացող աշակերտից ոչ թէ նախ գրել կարգալ ու զիտութիւն հարցնել, այլ հարցնել ամէնից առաջ

«Վորել զիտէ՞ նա արիւն»:

Միւսը, Ռաֆֆին, իր հերոսների բերանով անիծում է այն զիրն ու գպրութիւնը, որ մեղկացնում, թուլացնում են մարդուն. անիծում է հայ կղերին, որ միշտ քարզում է անտեղի ներողամտութիւն, ստրկական հնազանդութիւն եւ չնական ծառայականութիւն. . . անիծում է այն բոլոր պայմանները, որ հային գարձրին արիւնից վախեցող մի հաւ, որի «զլիսին խփեա՝ կըսատկի, քի՛շ անես՝ չի գնայ»:

Երկուսն էլ «արիւն, արիւն» են բզաւում: Կարծես երկուսն էլ պայմանաւորւել են իրենց ընթերցողներին գաղանացնել, նրանց ջղերը վարժեցնել արեան գոլորշիւերին: Կարծես գրանք «Ճաշակ կրթող ու միտք լուսա-

ւորող» գրական մարդիկ չեն, այլ հիւանդ ու թոյլ ներգերը պնդացնելու համար հրաւիրւած բժիշկներ:

Բայց այ քեզ հրաշք, հենց գրանով էլ մեծ են մեզ համար այդ երկու գրողները, զրա համար էլ նրանց գրւածքներն աւելի ու աւելի տարածւում են:

Ի՞նչու՞, սա ի՞նչ հակասութիւն է:

Սա հակասութիւն չէ, այլ շատ ճիշդ տրամաբանական հետեւանք իրերի ներկայ գրութեան: Տաճկահայաստան, Պարսկահայաստան, Ռուսահայաստան-ամէն տեղ ճնշում, ամէն տեղ բռնակալութիւն, բռնաբարութիւն, Ականք, արիւն ու արցունք...ի հարկէ մի տեղ շատ, մի տեղ քիչ չափերով: Հայ կեանքի բռնական գարզացման անտեսական հիմքերը նրան քշում են դէպի մի աւելի յարմար քաղաքական ձեւ, դէպի ասհմանազբութիւն, դէպի ընտրողական սկզբունք...: Իսկ այսօր գրան հասնելու միակ ձանապարհն է հրացանը, գնդակը, արիւնը: Եւ ահա ահստեսական հիմքերից ծնած այդ պահանջները դառնում են գաղափարներ, որ քշում են մարդկանց դէպի անձնազնութիւն: Ժողովրդի մէջ ծնուռմ են համապատասխան զգացմունքներ ու զարգանում: Եւ ինչ զրոյ որ չի համապատասխանի այդ պահանջներին, նա դէն կըպրուի հայ հասարակութեան կողմից, նա կարհամարհւի:

* * *

Պ. Գ. Արծրունին իր «Մշակ» ում Գ. Քաթիպային ընդունելով իբրև ըստ «Մշակ»-ի յառաջադիմ, նրա նշանաբանն ընդունեց.

Հայի ու Լեռնիկի մոռնանի մենք, եղբարդ.

Թափ տանի մեզանից հնուրեան փոշին...

Ի՞նչ «մոռնանք», ինչ շարջօնական առաջադէմ կամ յետագէմ... Մեծ բանաստեղծն իր «մոռնանք»-ին բոլորվին հակասող «Ուխտաւորի նամակներ»-ը գրեց, «Աստառը» շարագրեց: Գուցէ գուք մտածում էք, որ «նա կարող էր փոխել մոռնանի-ը վազուց է գրել. այն ժամանակ նա առաջադիմ էր, յետոյ փթած կղերական դարձաւ»: Ո՞չ, երբէ՛ք, երբէ՛ք: Գ. Քաթիպան միշտ եղել է նոյն մարդը: Նա երբէք չի մտել այդ հայկական խզակացութիւնների նեղ շրջանակների մէջ: Մինչեւ իր մահւան օրը նրա անխախտ նշանաբանը եղել է.

Կարդալ, գրել լու բան և...

Բայց որ հասաւ յնուրին,

Աշակերտին հարցուցիք—

Վորել զիտէ նա արիւն:

Սա է նրա առաջադիմութիւնն ու յետագիմութիւնը, սա՛ է նրա հաւատը: Զուր մի՛ աշխատիք Գ. Քաթիպայի նման մի յեղափոխական անձ մացնել ձեր մշակական

կամ նոր-դարական կուսակցութիւնների նեղ ու խեղ-
դող կուլտուրական շրջանակների մէջ. նա չի կարող
այնտեղ անդաւորւիլ:

Վերջապէս մի՞թէ ամէնքին յայտնի չեն նրա վերջին
ոտանաւորները, որ Ռուս բռնակալութիւնից ստիպւած՝
միայն ձեռագրով տարածւած են ժողովրդի մէջ: Այդ
ոտանաւորներում աւելի պարզապէս է փայլում նրա
ձգտման կէտն ու ուղղութիւնը, որ երբէք մինչեւ
մահւան օրն իսկ աչքիցը բաց չթողեց: Լսեցէք.

Գիտուն, րոդ գիրդ, ժամ յէ կարդալու.

Փեղուկ, դու էլ բո՞յ արօր ու գործան.

Տէր հայր, դադարէ մեռել քաղելեն—

Երկունիքի մէջ է մայր մեր Հայաստան:

Երկնում է հայաստանը. նա պէտք է ծնի մի լուսավայր
մանուկ, մի անմահ երեխայ, —դա բոլոր հայութեան
բաղձանքն է, դա ազատութիւնն է:

Յիշեցէք նրա «Սուրբ որբանով զաւկիս կերպնում»ը,
նրա «Մի՛ երգիր իմ սոխակը», ուր նա բացագանչում է.

Տաս հազար այնալու

Պէտք եր իմձ փրկելու . . .

Եւ ապա գիմելով Տաճկաստանից գուրս ապրող հայերին,
աւելացնում է պօէտը՝ սրտի խոր գառնութեամբ.

Մի օր շա՞ս կափսոսամ,

Որ օգնել չուզեցամ. . .

Այս բոլորը վկայում են, որ նրա բոլոր զգացմունք-
ները բռնած էին մի կէտով—հայկական անկախու-
թեան խնդրով: Միւս բոլոր հարցերում նա ոչ մի որոշ
կայունութիւն չունէր. միւս խնդիրները երկրորդական
հարցեր էին նրա համար:

Նա միակողմանի, կրօստ եւ լոկ անկախութեան
սիրով վառւած մի գրող էր. գրա համար էլ ամբողջ
հայութիւնը սիրում էր նրան:

* * *

Թէ՛ Գ. Քաթիպայի եւ թէ՛ Ռաֆֆու գրւածքների
ընդհանուր ուղղութիւնը միեւնոյնն է. նրանց քարո-
զածն ու էական ձգտումներն իրարից տարբերել չի
կարելի: Երկսի էլ զրածքների նիւթն է զլիաւրապէս
Տաճկահայի կեանքը, նրա տնտեսական, քաղաքական,
մտաւոր ու բարոյական գրութիւնը: Երկսի էլ արտա-
յայտութեան ձեւերն ու պատկերները խիստ, կծու ու
ծակող են: Եւ դա չափազանց բնական է. նոր ուղղու-
թեան կարապետները չեն կարող լինել «քաղաքավարի»
ու փափուկ: Ո՛չ միայն նոր ուղղութեան կարապետ-
ները, այլ եւ ամէն մի գրող, որ «գրում է իր սրտի
արիւնով եւ իր ջգերի հիւթով»—չի կարող ուրիշ կերպ
գրել ուրիշ կերպ արտայանել: Նա ստիպւած է իր
ներքին գառնութեան արվեստով մինչեւ մինչեւ թիւններ

ՀՕ. ԲԻBLIOGRAPHY
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԿADEMİCİAN
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԴՐԱՑՈՒՄ

ՀԱՅԱ-ԱՐՄ. ССР

ունենալ։ Մի՞թէ կարող է ներքին կսկծի ահազին հետզը դուրս վիժել քաղաքավարութեան նեղ ու ձեւած ճանապարհներով։ Նրանց մէջ այնքան լեղի, այնքան թոյն կայ ամպարւած, որ եթէ մի անգամից հնար ունենան դուրս թափել՝ կըխեզգեն մարդկանց, կայրեն անզգաներին։ Նրանց սիրան է այրւած, նրանց հոգին է դազւած, ի՞նչպէս խիստ ու կծու չլինի նրաց լեզուն։

30—40 թւականների «Երիտասարդ Գերմանիայի» հանձարները, գերմանական վերածնութեան երկու հակայ կարապետները—Հայնէն ու Բէօնէն՝ տասն անգամ աւելի խիստ, աւելի կծու են։ Ուրիշ կերպ մի՞թէ կարող էր լինել։ Ի՞նչպէս շարժել թմրա՛ծ, դիակացած մարդկանց։ Ի՞նչպէս ցնցել թարմացնել նրանց, եթէ ոչ նրանց ամէնափափուկ ջղերին միշտ ու անգաղար խիստ հարւածելով, եթէ ոչ «միշտ ու միշտ նրանց ականջներում ճանճի նման պզզալով», ի՞նչպէս ասում է Բէօնէն։

Գ. Քաթիպան եւ Թափթին միշտ ու միշտ բղաւում էին «զէնք, արի՛ւն» . . . : Ա՛յդ է պահանջում ներկայ ժամանակը, ա՛յդ սկսեց պահանջել եւ հայ ժողովուրդը։

Ազատութիւնն . . . եթէ նոյն խոկ այդ մեզնից խլէ արեան հեղեղներ. . . :

Ահա Հայի ներկայ ձգտումը։

Ip m.D.

qfrn. 50 undysph

22400

12013

